«ԱՅՍՕՐ ՈՒԽՏԻ ԵՆՔ ԵԿԵԼ ԵՎ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՊԻՏԻ ԳԱՆՔ»

Հոկտեմբերի 12-ին, Թարգմանչաց տոնի ուրախաբեր առիթով, Արարատյան Հայրապետական Թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրինությունը, կենտրոնի քառասուն ուսուցիչների և կիրակնօրյա դպրոցների ավարտական դասարանների շուրջ 70 սաների հետ, ուղևորվեցին դեպի Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբազան այս տոնն անվանել է «ժամադրություն Հայ գրի մեծ նվիրյալների հետ»՝ ավելացնելով, որ թարգմանությունը նվիրական բառ է հայերիս համար: Հայոց Հայրապետը նաև պատվիրել է ամեն տարի այս օրը ուխտի գնալ Թարգմանիչ Սուրբ Վարդապետի գերեզմանին: Եվ իսկապես, Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին լի էր հավատացյալ հայորդի ուխտավորների հոծ բազմությամբ, քանզի այդ օրը Սուրբ Պատարագ մատուցվեց մեր Սուրբ Թարգմանիչների հիշատակին:

Պատարագին ներկա էին Արագածոտնի Թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Նավասարդ վարդապետ Կնյանը, հոգեշնորհ Տ. Փառեն Ծ. վարդապետ Ավետիքյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Բարկեն աբեղա Սալբիյանը:

Օրվա պատարագիչն էր Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վարդապետ Նաջարյանը, որ իր հոգեպարար քարոզի ընթացքում գրերի գյուտը հայոց դարձից հետո ամենակարևոր իրադարձությունը համարեց ու ավելացրեց, թե պատահական չէ, որ, ի տարբերություն հայերի, աշխարհի շատ ժողովուրդներ չեն հիշում իրենց գրերի ստեղծողների անունները անգամ և, առավել ևս, չեն ոգեկոչում նրանց հիշատակները:

Կիրակնօրյա դպրոցների սաները Սուրբ Պատարագի ընթացքում հաղորդակից դարձան մեր Սուրբ նախնյաց հիշատակին, լսեցին հայր Հայկազունի հոգելից քարոզը, վայելեցին բարձրաստիճան հոգևորականների շնորհաբեր ներկայությունը, և համոզված ենք, որ հարստացան ու հաստնացան՝ սրբազան այս արարողության մասնակիցը լինելով:

Սուրբ Պատարագի ավարտին նրանք, ուսուցիչների ուղեկցությամբ, խոնարհվեցին մեր հոգևոր Հոր՝ Սուրբ Վարդապետ Մաշտոցի շիրմին և ուխտեցին հավատարիմ ժառանգորդը լինել նրա կտակած նվիրական այդ հարստության:

Եկեղեցու բակում Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրեն պարոն Արշավիր Գարուճյանը, իր շուրջը հավաքելով ուսուցիչներին ու սաներին, շնորհավորեց նրանց՝ ուսուցիչների այս տոնի և նոր ուսումնական տարվա կապակցությամբ, հանգամանորեն և մանրամասնորեն ներկայացրեց Թարգմանչաց խորհուրդը, քանզի նրանք, Սուրբ Գիրքը թարգմանելով, Աստծու սերը թարգմանեցին մեզ համար:

Եզրափակելով խոսքը, նա ասաց. *«Այս տոնի հարթության վրա է բարձրանում ամեն Գագաթ հայոց պատմության մեջ, և այս տոնի հարթությունից ներքև է գահավիժում ամեն պարտություն և հիասթափություն»*:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմ